

ԽԱԶԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Որ Խաչը մահուան գործիք է, այդ շատերս գիտեմք, բայց որ Խաչը նաեւ մեր փրկութեան Կենաց փայտն է, դրան չէքս եմք հաւատում: Եւ հենց այդ էլ մեր հոգու գարշապարն է դառնում, որից օգտուելով այս օդի իշխանը՝ սատանան, բազում մարդկանց կործանման է տանում:

Այդ եմ ապացուցում թէ՛ Աստուծոյ խօսքը, եւ թէ՛ Քրիստոսի Եկեղեցու 2000 ամեայ պատմութիւնը:

Իսկ թէ ինչպէս է այդ կատարում, մեզ կ'օգնեն հասկանալու Խաչի գորութեամբ հաւատի բարի պատերազմում յաղթող զինուորների կեանքն ու վկայութիւնները:

Սկսեմք Պօղոս սրբազան առաքելի խօսքերով.

«Բա՛ւ լիցի, որ ես մեր Տէր Յիսուս Քրիստոսի Խաչից գատ մի այլ բանով պարծենամ» (Գաղ.6:14): Լա՛ւ խորհեմք այս խօսքերի իմաստը, եւ իմանանք, ով է այդ ասողը. Աւետարանի ամենաեռանդուն, ամենաբեղմնաւոր եւ ընտիր ծառան, որի բարոգութիւններով բազում հեթանոս ազգեր ճշմարիտ Աստուծոյ դարձան: Նա Հրեայ փարիսեցի լինելով հանդերձ, իր դաստիարակութիւնը բուն հրեութեան մէջ էր ստացել, մի ազգի՝ որը արդէն բաւ դար ի վեր մնում է որպէս Խաչի եւ Խաչեալի առաջին թշնամին:

Ուրեմն եթէ Խաչեալը նրա կեանքը կարողացել է այնքան կտրուկ փոխել, որ նա ի յուր աշխարհի Խաչը որպէս իր համար միակ պարծանքի արժանի խորհրդանիշ է համարում, ապա իսկապէս Քրիստոսի Խաչի մէջ թափնում գորութիւն կայ, որը աւա՛ղ, այս դարի շատ ու շատ մարդկանց համար դարձել է անարգանքի, կամ գայթակղութեան նշան: Եւ ինչպէս նոյն առաքելն է ասում. «Խաչի Բարոգութիւնը կորստածների համար յիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներին համար Աստուծոյ գորութիւնը» (Ա.Կորնթ.1:18): Իսկ մի ուրիշ տեղում անկացնում է. «Բայց հիմա Քրիստոս Յիսուսով դուք, որ մի ժամանակ հեռու էիք, մերձաւոր եղաք Քրիստոսի արիւնով, քանի որ նա է մեր խաղաղութիւնը, որ երկուսը մէկ արեց ու մէջտեղի բաժանող պատը, այսինքն թշնամութիւնը, իր մարմնով քանդեց: Որպէսզի մեզ հաշտեցնի Աստուծոյ հետ իր Խաչով. քանի որ նրանով սպանեց թշնամութիւնը» (Եփես.2:18-19):

Այսինքն մեղաւոր մարդկութիւնը, որ մի ժամանակ թշնամացած էր Աստուծոյ հետ, այժմ հաշտութիւն է գտել Քրիստոսի Խաչի միջոցով: Իսկ թէ ի՞նչ է տալիս այդ հաշտութիւնը մարդուն, կարդանք Պօղոս առաքելի ուղերձը Հռոմեացիներին.

«Աստուած մեր հանդէպ իր սէրը յայտնեց նրանով, որ երբ տակաւին մեր մեղքերի մէջ էինք՝ Քրիստոս մեզ համար մեռաւ: Եւ հիմա, որ իր արիւնով արդարացել ենք՝ որքա՛ն առաւել յստահութեամբ կարող ենք սանել՝ թէ Քրիստոսով պիտի փրկուենք Աստուծոյ բարկութիւնից: Որովհետեւ, եթէ Աստուած իր Որդու մահով մեզ հաշտեցրեց իր հետ, դեռ այն ժամանակ՝ երբ տակաւին թշնամի էինք իրեն, եւ հիմա, որ արդէն հաշտուել ենք, ինչպա՛ն առաւել յստահութեամբ կարող ենք սանել՝ թէ պիտի փրկուենք

Քրիստոսի կեանքով»(Հռոմ.5:10):

Այսինքն մարդը խաչի վրայ թափուած Քրիստոսի արիւնով իր մեղքերին քաւութիւն եւ թողութիւն գտաւ, ու դրանով իսկ հաշտուելով սուրբ Աստուծոյ հետ, թէ՛ յաւիտեանական կեանքի խոստումը ստացաւ, եւ թէ՛ Տիրոջ գալիք ահեղ դատաստանի քարկութիւնից պիտի փրկուի: Իսկ որ դատաստանը ահեղ ու անաչառ պիտի լինի, դրանում թող ոչ ոք չը կասկածի, քանզի գրուած է. *«Մարափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը ընկնելը»*(Եբր.10:81):

Ուրեմն հաւատով ընդունելով Խաչը, ընդունում ենք Խաչեալին, ընդունելով Խաչեալին՝ ստանում ենք թէ՛ խոստացեալ յաւիտեանական կեանքը, եւ թէ՛ ազատում Աստուծոյ դատաստանից: Ահա թէ ինչու առաքեալը համարձակաբար գրում, եւ յորդորում է. *«Այս նորոգութիւնը Աստուծոց է, որ Քրիստոսի միջոցով մեզ Իրեմ հետ հաշտեցրեց ու նաեւ պաշտօն տուեց մեզ՝ ուրիշներին էլ հաշտութեան բերելու: Այսինքն Աստուած Ինքն էր որ Քրիստոսի միջոցով աշխարհը հաշտեցրեց Իրեմ հետ, ամիշաչար գտնուելով մարդկանց մեղքերի հանդէպ, եւ մեզ պաշտօն տուեց, որ այս հաշտութիւնը պատգամենք բոլոր մարդկանց: Ահա թէ ինչու՝ մենք Քրիստոսի կողմից պատգամաւորութիւն ենք անում, այնպէս՝ որ կարծես Աստուած Ինքն մեր միջոցով է խօսում ձեզ. եւ Քրիստոսի կողմից աղաչում ենք. Հաշտուեցէ՛ք Աստուծոյ հետ»*(Բ.Կորնթ.5:18):

Այսպէս յետոյ եթէ մարդը մերժում, կամ անարգում է փրկութեան Խաչը, ինչպէ՞ս կարող է հաշտուել Աստուծոյ հետ, չէ՞ որ սաացիմք, Քրիստոսի Խաչը դա մեր նման ընկած եւ մեղաւոր մարդուն մեկնած Աստուծոյ հաշտութեան քաղուկն է, եւ ոչ միայն այդքանը, այլեւ. *«Աստուած մերեց մեր բոլոր յանցանքները եւ Իր իշխանութեամբ ջնջեց մեր օրինազանցութեան պատճառով մեզ դէմ եղած դատապարտութեան վնիդը. այն գամելով Խաչափայտին»* (Կող.2:14):

Ուրեմն հաստատ իմանալով, որ մերժելով Խաչը, մեր յանցանքների համար արուած մահուան դատապարտութեան վնիդը մնում է ուժի մէջ, եւ վաղ թէ ուշ այն պիտի իրագործուի, որովհետեւ դրանով իսկ մերժել ենք Խաչեալին, քանզի այդ Խաչով էր որ Ինքն՝ Քրիստոս փառաւորուեց, ինչպէս եւ գրուած է. *«Նա, (Քրիստոս) մէկ գոհ մատուցելով մեղքերի համար, մշտընջեմաւորապէս Աստուծոյ աջ ձողովը նստեց: Եւ սրանից յետոյ սպասում է միևնու իր թշնամիները Իր ռախիքի տակ պատուանդան դրուեն»*(Եբր. 10:12-18):

Եւ այդ գոհը ոչ այլ ինչ էր, քան հենց Ինքն՝ Աստուծոյ անարատ Գառը, Միածին Որդին, որի համար վկայեց Յովհաննէս Մկրտիչը, ասելով. *«Ահա՛ Աստուծոյ Գառը, որ աշխարհի մեղքը կը վերցնի»* (Յովհ.1:29):

Այժմ մեր ընտրութիւնից է կախուած, որպէս Խաչի թշնամիներ Քրիստոսի ռախի տակ պիտի կոխկոտուե՞նք, թէ՞ Նրա հետ յաւիտեանական կեանք վայելենք:

Իսկ եթէ ձեզանից ոմանք հարցնեն, թէ ինչպէս հաշտուենք Աստուծոյ հետ. նրան պատասխանենք Յովհաննէս առաքեալի խօսքերով. *«Նքէ ասեմք թէ մենք ոչ մի մեղք չունենք, իմքներս մեզ ենք խաբում, ու*

մեր մէջ նշմարութիւն չկայ, իսկ եթէ խոստովանենք մեր մեղքերը. հաւատարիմ է ու արդար է Աստուած մեր մեղքերին թողութիւն տալու եւ մեզ բոլոր անիրաւութիւններից փրկելու: որովհետեւ Նրա Որդու Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքից սրբում է» (Ա.Յովհ.1:7-9):

Այսինքն Յովհաննէս առաքեալը մեզ՝ մահկանացու մարդկանց, հայրաբար խրատում է, որ բոլորս ենք մեղաւոր, բայց մեղքի գիտակցութիւնը, գղջումով խոստովանութիւնն ու հաւատը Աստուծոյ Որդու՝ Յիսուս Քրիստոսի փաւարար ու սրբարար արեան հանդէպ, բաւարար պայման է որպէսզի մեր բոլոր գործած մեղքերին թողութիւն ստանանք, եւ դրանով իսկ հաշտուած կը լինենք մեր Տէր Աստուծոյ հետ:

Եւ միթէ՞ մեր առօրեայ կեանքի օրինակները այդ չեն բացատրում: Երբ գաւակը մեղանչում է ծնողի հանդէպ, նրանց միջեւ կարծես մեղքի անտեսանելի պատնէշ է գոյանում, որը խանգարում է ծնող-գաւակ միշտ յարաբերութեանը: Եւ ծնողը, չնայած եւ իր ներման պատրաստակամութեանը, չի կարողանում իր ողջ ծնողական սէրն ու գուրգուրանքը ցուցաբերել, որովհետեւ որդու կատարած մեղքը սառց է պատնէշի մէջն արգելք է հանդիսանում, բայց հայրը ամէն օր սպասում է, որպէսզի որդին գղջայ իր կատարած արարքի համար, ու գայ խոստովանելով ներում խնդրի, եւ ծնողը պատրաստ է ուրախութեամբ ներում շնորհել: Ինչո՞ւ. որովհետեւ ծնողը աւտում է կատարուած մեղքը, բայց սիրում է որդուն:

Եւ Յիսուսի պատմած աւետարանական անառակ որդու օրինակը (Հովհ.15:11) մեզ հենց այդ է սովորեցնում, որ մեր բոլորի երկնաւոր Հայրը նշմայէս ամէն օր իր մոլորման ու մեղաւոր որդիների դարձին է սպասում, որպէսզի մեզ ներելով, ու իր հետ հաշտեցնելով, նորից մեր կորսուած որդիական իրաւունքը վերականգնի: Ինչը եվ հաստատում է Յովհաննէս աւետարանչի խօսքը. «Տեսէ՛ք ինչպիսի՛ սէր շնորհեց մեզ Հայրը, որպէսզի մենք կոչուենք Աստուծոյ որդիներ» (Յովհ.Ա Յ:1): Իսկապէ՛ս որ ԱՍՏՈՒԱՄ ՍԷՐ է, եւ այդ երկնային սէրը երկրի վրա ապացուցուեց Քրիստոսի Խաչով:

Իսկ Հայաստան աշխարհով մէկ սփռուած Խաչերն ու խաչքարերը, միթէ՞ մեր ազգի եւ Աստուծոյ միջեւ եղած հաշտութեան ուխտի նշանները չեն, որը բոլոր վայրենաբարոյ, հեթանոս, բարբարոս, այլակրօն ու կոմունիստ ազգերի համար ասելութեան՝ բայց մեր համար փրկութեան նշան դարձաւ: Նրանք իրենց ուժով մեր հողին եւ մարմնին տիրեցին, բայց Քրիստոսին Խաչով դաւանող Հայի հոգին մնաց անպարտելի: Եւ դրա ապացոյցը այն է, որ այդ տիրող շատ ազգեր աշխարհի համար մնացին որպէս պատմութեան յուշ, թէ՛ ֆարսէզի եւ թէ՛ երկրի վրայ չը թողնելով եւ ոչ մի հետք, իսկ ահա Խաչին ու Խաչալին դաւանող ազգս Հայոց կայ, թէ՛ իր նախնիների հողում ազատ ապրող, թէ՛ իր սուրբ էջմիածին հոգու-սրտի հաւատով, եւ թէ՛ իր լեզուով ու բազմադարեայ մշակոյթով. ու ոչ միայն կա՛յ, այլ եւ կը լինի մինչեւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկրորդ ու ահեղ գալուստը. «Ջի Աստուած ընդ մեզ է»:

Խաչի եւ Խաչեայի մասին այսօր Լաստուծոյ խօսքից, ու Եկեղեցու 2000 ամեայ պատմութիւնից :

Իսկ այժմ ունկնդրենք առաքելաւորական եկեղեցիներին սուրբ հայրերին, որոնք Քրիստոսի Խաչի չարաբանքներին մասնակից լինելով փառաւորեցին Աստուծոյ, ու խոստացուած երկնային փառքի պսակին արժանացան, դառնալով կրակով անցած այն ոսկին, որոնց փորձառութիւնն ու խրատները ունենալով է, որ կարող ենք սատանայի խորամանկ հնարքներին դիմակաւել այս չար ժամանակներում, ինչպէս որ յորդորում է Յովհաննէս առաքելաւորը, ասելով. «*Եւ քեզ խորհուրդ եմ տալիս. ինձանից կրակով անցած ոսկի գնիր, որպէսզի հարստանաս*» (Յայտն.Յ:18):

Իսկ Քրիստոսի Խաչի մասին օրհնելով Լաստուծոյ այդ երանելի ծառաները այսպէս են գրում.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԷԲԵՐԱՆ. «*Խաչը դա երկնայինների ու երկրայինների միացումն ու դժոխքի աւերումն է*»:

«*Շատերը չը կարողացան հասկանալ, որ Խաչը դա տիեզերքի իրական ու նամաչիլի հիմքն է, որ այն Արարչի կնիքն է Իր ստեղծածների վրայ*»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՄԱՍԿԱՑԻ. «*Ինչպէս Խաչի չորս կողմերը միանում եւ հաստատում են միջնակետով, այդպէս էլ Աստուծոյ զօրութեամբ Խաչի վրա հաստում են. քարձրութիւնը, խորութիւնը, լայնութիւնն ու երկարութիւնը, այսինքն տեսանելի եւ անտեսանելի ստեղծութիւնները*»:

ԱԹԱՆԱՍ ՄԵՄ. «*Խաչը տեսանելիներից անտեսանելի տանող աստիճաններն են, որի միջոցով մարդու միտքը զգայականից վեր է նախընտրում, եւ հպում երկնայինի՝ Աստուածայինի հետ*»:

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ. «*Տեսէ՛ք Նեոի խորամանկութիւնը. նա իր իշխանութեան տակ գտնուող բոլոր մարդկանց աջ ձեռքին եւ նակատին իր կնիքը պէտք է դնի, որպէսզի մարդը այլեւս չը կարողանայ խաչակնքուել, ինչպէս սովորաբար անում են աջ ձեռքով սկսելով, նախ նակատին դնելով, որի ժամանակ Տիրոջ անունն են տալիս, որովհետեւ անօրէնը գիտի, որ Քրիստոսի Խաչի նշանը բանդում է իր ողջ զօրութիւնը*»:

ՍՈՒՐԱ ՕԳՈՍՏԻՆՈՍ. «*Եթէ Խաչի նշանը չ'օգտագործենք. կամ հաւատացեալի նակատին, կամ ջրի վրայ, որից վերածնունդ են, կամ օծման ժամանակ, կամ Սուրբ Զոհի վրայ, որը մենք ուտում ու ապրում ենք. ապա ամէն բան անպտուղ է*»:

ԻՍԱՀԱԿ ԱՍՈՐԻ. «*Խաչը այն կամքն է, որ պատրաստ է ամէն վշտի*»:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ. «Քրիստոսի Խաչի չորս թելերը չորս քարերարությունն են նշանակում. վերին մասը ցոյց է տալիս երկնքի արքայության քաջումը, ներքեինը՝ դժոխքի աներումը, աջը՝ շնորհների քաջումը, ճախը՝ մեղքերի թողությունը»:

«Խաչի չորս թելերը չորս առաքինություններ են նշանակում, որ պարտ է տարածուի մեր ներքին մարդու մէջ. այսինքն վերին մասը խորհրդանշում է սէրը, ներքեինը՝ խոնարհությունը, աջը՝ հնազանդությունը, իսկ ճախը՝ համբերությունը»:

Եւ աւարտեմք այս բալորը Քրիստոսի փրկարար Խաչի մասին Ներսէս Շնորհալու աղօթքով, եւ ասեմք.

ԽՆԱՄՈՂ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ,
ԽԱԶԻԿ ՆՇԱՆՈՎ
ՊԱՀՊԱՆԻՐ ՀՈԳԻՍ ԵՒ ՄԱՐՄԻՆՍ.
ՄԵՂԲԵՐԻ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻՑ,
ԴԵՒԵՐԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ,
ԱՆԻՐԱՒ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ,
ՈՒ ԲՈՂՈՐ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ ՀՈԳՈՒ ԵՒ ՄԱՐՄՆԻ.
ԵՒ ՈՂՈՐՄԻՐ ՔՈ ԱՐԱՐԱԾՆԵՐԻՆ
ԵՒ ԻՆՁ՝ ԲԱԶՄԱՄԵՂԻՍ:

Շարադրեց՝ Մեհրութան Բաբաջանեանը.
Սուրբ Յակոբեանց Վարժարանի Կրօնի ուսուցիչ.
Քաղաք Երուսաղէմ. 1999թիւ: